ԱԳՈՐԱ Լոռաստան

ԴԵԿՏԵՄԲԵՐ 5 - 15 2015 Թ. ԹԻՎ 32 (2087)

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Հորդանանը հետաքրքրված է գյուղատնտեսական կենդանիների արտահանմամբ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Հորդանանի «Կենդանիների հիվանդությունից զերծ գոտի» ծրագրի համակարգող, Հորդանանի գյուղատնտեսության նախկին նախարար Սաիդ Ալ-Մասրիին և ծրագրի գործադիր տնօրեն Վալիդ Սաիդին:

Հանդիպմանը ներկա էր նաև Ռուսաստանի Դաշնությունում ՀՀ առևտրական ներկայացուցիչ Կարեն Ասոյանը: Հանդիպման սկզբում Սաիդ Ալ-Մասրին տեղեկացրել է, որ այցի նպատակն է՝ խթանել երկկողմ համագործակցությունը և քննարկել անասնապահության ոլորտում համատեղ ծրագրի իրականացման հնարավորությունը: Նա նշել է, որ՝ վերջին տարիների ընթացքում, ակտիվ քայլեր են ձեռնարկվում Հորդանանը անասնաբուծության տարածաշրջանային հանգույցի վերածելու և այստեղ նոր ռեգիոնալ անասնաբուծական շուկա ստեղծելու ուղղությամբ: Այդ նպատակով, 2016 թվականի կեսերից նախատեսվում է մեկնարկել «Կենդանիների հիվանդություններից զերծ գոտի» վերտառությամբ ծրագիր, որի շրջանակում այժմ դիտարկվում են այն երկրները, որոնք կարող են դառնալ պոտենցիալ մատակարար այդ գոտու համար՝ հետագայում այդ կենդանիները Հորդանանից դեպի այլ արաբական երկրներ տեղափոխելու նպատակով: Ծրագիրը, որն արաբական երկրներում իրականացվող ամենամեծ նախագիծն է հանդիսանալու, իրականացվելու է խոշորագույն «The King Abdullah II Fund for Development (KAFD)» հիմնադրամի համաֆինանսավորմամբ: Պարոն Սաիդ Ալ-Մասրին ընդգծել է, որ նկատի ունենալով Հայաստանում ոչխարաբուծության ճյուղի բարձր մակարդակը, ինչպես նաև տեղական ոչխարների որակական բարձր հատկանիշները, հորդանանյան կողմը հետաքրքրված է, որպեսզի Հայաստանը նույնպես ընդգրկվի այդ ծրագրի մեջ՝ որպես կառուցվող գոտու համար ոչխարների մատակարարման հիմնական գործընկեր:

«Հայաստանը անասնապահության, և մասնավորապես՝ ոչխարաբուծության ոլորտում ունի զարգացման մեծ ներուժ, ուստի կարծում եմ, որ այս ոլորտում մեր երկկողմ համագործակցությունը կլինի շատ արդյունավետ և փոխշահավետ: ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը պատրաստ է աջակցություն ցուցաբերել այս ծրագրի իրագործման հարցում», - նշել է ի խոսքում նախարար Սերգո Կարապետյանը: Համառոտ ներկայացնելով Հայաստանում ոչխարաբուծության ոլորտի ներկա վիճակն ու այս ճյուղի զարգացման հեռանկարները՝ նախարարը շեշտել է, որ մեր երկրից տարեկան հնարավոր է արտահանել մոտ 250-300 հազար գլուխ ոչխար: Պատվիրակության անդամները նաև նշել են, որ ծրագրի շրջանակում գարնանը Հորդանանի մայրաքաղաք Ամմանում նախատեսվում է՝ շահառու երկրների մասնակցությամբ, կազմակերպել խոշոր կոնֆերանս, ինչպես նաև ցուցահանդես-համտես, որի ընթացքում դեպի հորդանանյան հատուկ գոտի արտահանող երկրները կկարողանան ներկայացնել իրենց արտադրանքը: Հանդիպման ավարտին նախարարը հույս է հայտնել, որ գյուղատնտեսության ոլորտում հայ-հորդանանյան համագործակցությունն աստիճանաբար ավելի կընդլայնվի և կզարգանա՝ ընդգրկելով ոլորտային այլ ճյուղեր ևս:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

Կոոպերատիվների զարգացումը մեր երկրի համար հեռանկարային ծրագիր է

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն աշխատանքային այց է կատարել Տավուշի մարզ: Այցի ընթացքում նախարարին ուղեկցում էր Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակի տնօրեն Գագիկ Խաչատրյանը:

Այցի առաջին կանգառը՝ Իջևանի տարածաշրջանի Ներքին Ծաղկավան համայնքում էր, որտեղ նախարարը մասնակցել է արոտօգտագործողների կոոպերատիվի տարեկան հաշվետու ժողովին: Կոոպերատիվը ստեղծվել է 2011 թվականին և հանդիսացել է «Համայնքների գյուղատն-

☞ 2

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Գործադիրի որոշմամբ՝ կառավարության պահուստային ֆոնդից ավելի քան 97 մլն դրամ կհատկացվի Արմավիրի մարզպետարանին՝ օգոստոսի 22-ի և հոկտեմբերի 4-ի կարկտահարության հետևանքով մարզի համայնքների հողի հարկ վճարող, ոռոգման ջուր օգտագործող, ինչպես նաև՝ ջերմատնային տնտեսությունների սեփականատեր հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով: Հիշեցնենք, որ ուժեղ կարկտահարությունից տուժել են մարզի՝ Քարակերտ, Մյասնիկյան, Կողբավան, Բաղրամյան, Բագարան, Շենիկ, Դալարիկ, Մրգաշատ, Մարգարա, Վարդանաշեն, Երասխահուն և Ակնաշեն համայնքներում գործող գյուղացիական տնտեսությունները:

* * *

Կառավարության մեկ այլ որոշմամբ, գումար կհատկացվի նաև Վայոց ձորի մարզի Վարդահովիտ համայնքի ներհամայնքային ճանապարհների խճապատման, Խաչիկ համայնքի համայնքային ճանապարհների քարաթափման և Արարատի մարզի Դալար համայնքի առողջության առաջնային պահպանման կենտրոնի վերանորոգման նպատակով:

Կառավարության որոշմամբ՝ Լոռու մարզի Լեռնապատի առողջության կենտրոնի նախկին տնակային շինությունը նվիրաբերվել է Լեռնապատ համայնքին՝ մարզասրահի վերափոխելու նպատակով: Համայնքը պարտավորվել է կատարել համապատասխան ներդրումներ՝ շինության վերանորոգման և գույքի ձեռբերման համար: Մարզասրահի կառուցումը կխթանի գյուղական համայնքներում սպորտի զարգացմանը:

* * *

Գործադիրի մեկ այլ որոշմամբ՝ Արագածոտնի մարզի Արտենի համայնքի Բաղրամյան փողոցի 39 հասցեում գտնվող անշարժ գույքը և դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ հողատարածքն, անհատույց օգտագործման իրավունքով, տրամադրվել է մարզի Արտենիի առողջության կենտրոնին՝ առողջապահական ծառայություններ մատուցելու նպատակով:

* * *

Գործադիրը հավանություն է տվել «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» և «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթին, որը կարգավորում է գյուղատնտեսական կոոպերատիվների և դրանց միությունների ստեղծման, անդամակցության, գործունեության իրականացման, կառավարման, գործունեության դադարման, վերակազմակերպման, լուծարման հետ կապված հարաբերությունները և սահմանում է դրանց մասնակիցների իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը, ինչպես նաև՝ կոոպերատիվների պետական աջակցության ուղղությունները:

Նախագծի ընդունման արդյունքում, ակնկալվում է, որ կհստակեցվեն գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, կխթանվի գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորումը, կբարձրանա գյուղացիական տնտեսությունների գործունեության արդյունավետությունը, տնտեսվարողների մրցունակությունը, երկրի պարենային անվտանգության մակարդակը:

Կոոպերատիվների գործունեությունը կնպաստի նաև գյուղական համայնքների զարգացմանը:

Իրականացված աշխատանքներ՝ ծրագրի շրջանակներում էջ 3

ՏԻՄ-կոոպերատիվ համագործակցությունից շահում է բնակչությունը էջ 5

Մասնագետի խորհուրդը էջ 7

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

Կոոպերատիվների զարգացումը մեր երկրի համար հեռանկարային ծրագիր է

1

տեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» (CARMAC) ծրագրի առաջին շահառուներից մեկը: Կոոպերատիվի նախագահ Գևորգ Գալստյանը զեկուցել է, որ իր գործունեության չորս տարիների ընթացքում կոոպերատիվը գգալի հաջողություններ է գրանցել. ավելացել է գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը, բարձրացել է վարելահողերի օգտագործման մակարդակը, բարելավվել են դեգրադացված արոտները: Նախարար Սերգո Կարապետյանն ընդգծել է կոոպերատիվների ստեղծման կարևորությունը: «Կոոպերատիվների զարգացումը մեր երկրի համար հեռանկարային ծրագիր է և գյուղատնտեսության զարգացման համար ամենակարևոր խնդիրը: Հանրապետությունում արդեն ունենք կոոպերատիվների ստեղծման և արդյունավետ գործունեության փորձ, և ՀՀ կառավարությունն ամեն կերպ խրախուսելու է, որպեսզի նման կոոպերատիվներն ավելանան և ընդլայնվեն: Հանրապետությունում արդեն առկա է արդյունավետորեն գործող շուրջ 150 կոոպերատիվ», - նշել է նախարարը:

Սերգո Կարապետյանը նաև տեղեկացրել է, որ CARMAC 1 ծրագրում Տավուշի մարզից ընդգրկված են 13 համայնքներ, միաժամանակ նախարարը համոզմունք է հայտնել, որ CARMAC 2 ծրագրի մեջ մարզից հնարավոր կլինի ներգրավել մոտ 20 համայնք:

Նախարարը, անդրադառնալով ծրագրում ընդգրկված համայնքների խնդիրներին՝ դրանց թվում, մասնավորապես՝ մատնանշել է մսի և կաթի մթերման խնդիրները, որոնց լուծման համար երկրորդ ծրագրի շրջանակում քայլեր են ձեռնարկվելու: Նախարարը նաև նշել է, որ ծրագրում ընդգրկված սահմանամերձ համայնքներում նախատեսվում է ջերմոցների, վերամշակման արտադրամասերի, չորանոցների կառուցում, ինչը թույլ կտա գյուղացիներին ավելացնել իրենց եկամուտները:

Կոոպերատիվի նախագահ Գևորգ Գալստյանն իր հերթին գոհունակությամբ նշել է, որ CARMAC ծրագրի շրջանակում կոոպերատիվի կողմից ձեռքբերված գյուղտեխնիկայի շնորհիվ, խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը 260-ից ավելացել է մինչև 305 գլուխ, ավելացել է նաև կաթնատվությունը: Գրանցված բարձր ցուցանիշներն ամրապնդելու և ավելացնելու նպատակով, Գևորգ Գալստյանը խնդրել է կոոպերատիվն ընդգրկել նաև CARMAC 2 ծրագրում: Կոոպերատիվի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու համար անդամները խնդրանքով դիմել են նախարարին՝ նաև կոմբայն տրամադրելու համար:

Ընդհանուր առմամբ, ծրագրի իրականացման արդյունքում, Տավուշի մարզի 13 համայնքում կառուցվել է շուրջ 11.5 կմ ջրարբիացման համակարգ, տեղադրվել են 31 խմոցներ, որոնցով ջրարբիացվել է ավելի քան 14500 հա արոտ, ինչպես նաև բարելավվել է դեպի արոտ տանող շուրջ 10 կմ ճանապարհը: Բացի այդ, 13 համայնքում ստեղծված կոոպերատիվներին տրամադրվել է 71 միավոր գյուղտեխնիկա: Ջրարբիացման համակարգերի կառուցման արդյունքում, լիարժեք օգտագործելի են դարձել նախկինում մասնակիորեն օգտագործվող շուրջ 10 հազար հա արոտներ և շուրջ 4500 հա արոտավայրեր: Ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների պարբերական մոնիտորինգի արդյունքում գրանցվել են կաթնատվության 18 տոկոս աճ և շուրջ 15 տոկոս քաշաճ:

Այնուհետև նախարարն ուղևորվել է դեպի Նոյեմբերյանի տարածաշրջանի Ջուջևան համայնքում գտնվող «Արթուր և Էդիտա» ՍՊԸ պահածոների արտադրամաս, որի սարքավորումների վերազինման, տեխնոլոգիաների արդիականացման և սննդի անվտանգության բարելավման ծրագիրը հաղթող է ճանաչվել CARMAC 2 ծրագրի «Արժեշղթայի զարգացում» բաղադրիչի շրջանակներում: Ընկերությունը կստանա 50 հազար ԱՄՆ դոլարի չափով դրամաշնորհ՝ կարողությունների հզորացման, սննդամթերքի անվտանգության հարցերի բարելավման և արտահանման հնարավորությունների ավելացման նպատակով և նույն չափով ներդրում էլ ինքը կիրականացնի: Ներկայացված ծրագրով նախատեսվում է մեքենայացնել վերամշակման ենթակա մրգի, հատապտղի և ապակյա տարաների լվացման գործընթացները, ավտոմատացնել արտադրանքի վերամշակման և պահածոյացման գործընթացները և այլն: Տնօրեն Արթուր Չիլինգարյանի փոխանցմամբ՝ թողարկված արտադրանքի մեծ մասն արտահանվում է Ռուսաստան և Գերմանիա, արդեն կա պայմանավորվածություն արտահանումներ կազմակերպել նաև նաև դեպի Թուրքմենստան: Առաջիկայում «Արթուր և էդիտա» ՍՊԸ-ն նախատեսում է իր արտադրամասում կազմակերպել նաև ազնվամորու, մոշի և մասուրի հյութերի արտադրություն և ընդլայնել արտադրության ծավալները՝ ԵՏՄ երկրներ արտահանման նպատակով:

ԱՍՈՒԼԻՍ

Գյուղատնտեսության ոլորտում միջազգային համագործակցության ծրագրերի արդյունքները

Մամուլի ասուլիսի ժամանակ ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Արմեն Հարությունյանը ներկայացրել է 2015 թվականի ընթացքում նախարարության կողմից միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքները և առաջիկա ծրագրերը: Նա մասնավորապես անդրադարձել է Եվրամիության, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության, ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության, Շվեյցարիայի զարգացման համագործակցության գրասենյակի ֆինանսավորմամբ՝ գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ծրագրերին:

Այդ թվում՝ Եվրամիության հետ համագործակցության շրջանակում փոխնախարարն առանձնացրել է «Արևելյան համագործակցության գյուղատնտեսության և գյուղի զարգացման» 25 միլիոն եվրո արժողությամբ եռամյա ծրագիրը, որից 20 մլն-ը՝ բյուջետային աջակցություն է, 5-ը՝ տեխնիկական և իրականացվում է ՄԱԿ-ի կառույցների կողմից: Ծրագրի տեխնիկական բաղադրիչի ներքո ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունն իրականացնում է ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումներ, որի շրջանակում այժմ նախարարությունը մշակում է հետբերքահավաքի կանոնակարգ և ուսումնասիրում բնածին աղետների դեմ պայքարի նորագույն տեխնոլոգիաների ներդրման հարցը: Արմեն Հարությունյանը հավելել է, որ՝ այս մեթոդոլոգիայի շրջանակում, պիլոտային ծրագրեր կիրականացվեն հակակարկտային ցանցերի տեղադրման, ցրտահարության դեմ պայքարի միջոցառումների նոր տեխնոլոգիաների մասով: Ծրագիրն ունի նաև դրամաշնորհային բաղադրիչ, որն իրականացվում է ՄԱԿ-ի արդյունաբերության զարգացման և ՄԱԿ-ի զարգացման գործակալության կողմից և նպատակուղղված է կոոպերատիվների աջակցությանը:

Փոխնախարարն ընդգծել է, որ այս տարի ՀՀ բոլոր մարզերի գյուղացիական տնտեսությունները, որոնք ցանկանում են կոոպերատիվներ հիմնել, հնարավորություն են ունեցել հայտեր ներկայացնել, որի արդյունքում՝ ըստ չափորոշիչների, կընտրվեն 30-35 կոոպերատիվներ, որոնք կստանան դրամաշնորհներ Եվրամիության կողմից:

Փոխնախարարը տեղեկացրել է նաև, որ դեկտեմբերի 15-ին Հայաստանում կմեկնարկի նոր ծրագիր՝ ԵՄ և Ավստրիայի զարգացման գործակալության ֆինանսավորմամբ, որը կուղղվի Հայաստանում օրգանական գյուղատնտեսության զարգացմանը: Նախատեսվում են բարեփոխումներ օրենսդրական դաշտում, դրամաշնորհային ծրագիր, որը բաց է լինելու ՀՀ բոլոր մարզերի գյուղացիական տնտեսությունների համար: Ծրագրի բյուջեն կազմում է 3,3 մլն եվրո, տևողությունը՝ երեք տարի է: ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հետ իրականացվող ծրագրերն են՝ «Համատարած գյուղատնտեսական հաշվառում» ($2 մլն, 2014-2017թթ.), «Համագործակցություն հանուն գյուղի զարգացման», ($4 մլն 2013-2018թթ.), «Գյուղի զարգացման նախաձեռնություն» ($4 մլն, 2013-2018թթ.):

Բացի այդ, ԱՄՆ ՄԶԳ-ի հետ իրականացվում են անասնաբուժական կենտրոնների ստեղծման և մասնավոր խորհրդատվական համակարգերի խթանման ծրագրեր: Արմեն Հարությունյանը հայտնել է, որ մինչև 2017 թվականը նախատեսվում է ստեղծել թվով 20 անասնաբուժական կենտրոններ, որոնք կապահովեն այլընտրանքային խորհրդատվություն գյուղացիական տնտեսությունների համար: 2016 թվականին ԱՄՆ ՄԶԳ-ն ֆինանսավորել է նաև ջրային համակարգի արդիականացմանն ուղղված ծրագիր, որի շրջանակում երեք պիլոտային ծրագրեր են իրականացվել՝ ջրախնայողատար համակարգերի տեղադրման մասով, ինչը կնպաստի, որպեսզի ձկնաբուծական տնտեսություններն առավել արդյունավետ դարձեն իրենց գործունեությունը:

Նախարարությունը շարունակում է համագործակցությունը ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության հետ, այս պահին կան 7 ընթացիկ ծրագրեր: Դրանցից են՝ Խաղողի կոլեկցիոն այգիների ստեղծման, Ձկնաբուծության զարգացման, Բրյուցելոզի դեմ պայքարի պիլոտային ծրագրերը: Փոխնախարարի խոսքով՝ այս տարի նախարարությունը բավականին արդյունավետ համագործակցել է Ֆրանսիայի դեսպանատան հետ, և տարվա ընթացքում Հայաստան են ժամանել առաքելություններ՝ խորհրդատվական համակարգի արդիականացման և խաղողագործության և գինեգործության զարգացման նպատակով: Ակնկալվում է, որ 2016 թվականին ֆրանսիացի մասնագետներ կժամանեն՝ պանրագործության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման և մեր հանրապետությունում պանիրների նոր տեսակների արտադրության զարգացման նպատակով:

Արմեն Հարությունյանը շեշտել է, որ նոր տեխնոլոգիաների ներդրումը պայմանավորված է նոր շուկաներ գտնելու և արտահանման աշխարհագրությունն ընդլայնելու անհրաժեշտությամբ:

Այս տարի Հայաստանը դարձել է Խաղողի և գինու միջազգային կազմակերպության անդամ և Գերմանիայի զարգացման գործակալությունն աջակցել է, որպեսզի հայկական կրթական և գիտական հաստատությունների անդամները մասնակցեն և իրենց թեզերը ներկայացնեն հեղինակավոր կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումների շրջանակում:

Անդրադառնալով ԵԱՏՄ ագրոարդյունաբերական համալիրի քննարկումներին՝ փոխնախարարը հայտնեց, որ ստեղծվել են 12 աշխատանքային խմբեր, որոնք նպատակաուղղված են գյուղատնտեսության ոլորտում տարբեր համատեղ ծրագրերի իրականացմանը:

ԱԳՐՈ Լրատու
Դեկտեմբեր 5 - 15, 2015 թ.
թիվ 32 (2087)

ԱՍՈՒԼԻՍ

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

«Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ տնօրեն Գագիկ Խաչատրյանի մամուլի ասուլիսի ընթացքում ներկայացվել են «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» առաջին և երկրորդ ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքներն ու գրանցված արդյունքները:

Ծրագիրը մշակվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Համաշխարհային բանկի փորձագետների կողմից: Հինգ տարի տևողությամբ և 21.33 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով այս ծրագիրը մեկնարկել է դեռևս 2011 թվականի հուլիսին:

Ծրագրի հիմնական նպատակներն են՝ աջակցել ընտրված անասնապահական ուղղվածություն ունեցող լեռնային և սահմանամերձ համայնքներին, իրականացնել արոտօգտագործման և կերարտադրության վրա հիմնված անասնապահական մթերքի արտադրության արդյունավետ և կայուն համակարգ, աջակցել համայնքներում արոտօգտագործողների կոոպերատիվների ստեղծմանն ու կայացմանը, նորարական տեխնոլոգիաների ներդրմանը, ինչպես նաև՝ տոհմային աշխատանքների և կենդանիների առողջությանն ուղղված միջոցառումների բարելավմանը:

Գագիկ Խաչատրյանը նշել է, որ նախատեսված 55 համայնքի փոխարեն, ծրագրի իրականացման 4 տարիների ընթացքում, նրանում ընդգրկվել է 91 համայնք, որոնցում ստեղծվել են «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ, 74 համայնքում կառուցվել են արոտավայրերի ջրարբիացման համակարգեր, 74 համայնքի կոոպերատիվներին տրամադրվել է 664 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում՝ 143 անիվավոր տրակտոր, 91 մամլիչ-բարդոցիչ, 430 միավոր այլ գյուղգործիքներ նաև 91 համայնքի կոոպերատիվների անդամների համար կազմակերպվել են դասընթացներ: Բացի այդ, Արագածոտնի մարզի՝ Արտաշավան, Սյունիքի մարզի՝ Խնձորեսկ և Գեղարքունիքի մարզի՝ Ճամբարակ համայնքներում կառուցվել և արդեն իսկ գործում են անասնաբուժական սպասարկման կենտրոններ:

Ըստ գրասենյակի տնօրենի՝ իրականացված միջոցառումների արդյունքում ջրարբիացվել է նախկինում չօգտագործվող կամ թերի օգտագործվող շուրջ 121,500 հա արոտ, ավելացել է խոշոր եղջերավոր կենդանիների կաթնատվությունն ու քաշաճը, իսկ անասնապահական արտադրանքի վաճառքից ֆերմերային տնտեսությունների կողմից ստացված եկամուտներն ավելացել են կրկնակի անգամ:

«Գրանցված լավ արդյունքների շնորհիվ, ծրագիրն այսօր չափազանց պահանջված է և անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքների շրջանում մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Համաձայն մշտապես իրականացվող մոնիտորինգի տվյալների՝ ծրագրի մեկնակից ավելի քան 4 տարի անց խոշոր եղջերավոր կենդանիների կաթնատվությունն ավելացել է շուրջ 26, քաշաճը՝ 18 տոկոսով», - իր խոսքում նշել է Գագիկ Խաչատրյանը:

Գագիկ Խաչատրյանն անդրադարձել է նաև 2015 թվականի փետրվարից գրասենյակի կողմից իրականացվող հնգամյա «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրին, որի ընդհանուր արժեքը 42.67 միլիոն ԱՄՆ դոլար է:

Երկրորդ ծրագրի հիմնական նպատակներն են՝ շարունակել բարելավել արոտավայրերի և անասնապահության համակարգերի արտադրողականությունն ու կայունությունը թիրախային համայնքներում, ինչպես նաև՝ ապահովել ընտրված բարձրարժեք ագրոպարենային՝ կաթի, մսի, մրգի, բարձրարժեք հատապտղի և բանջարեղենի արժեշղթաներում արտադրվող և շուկայահանվող արտադրանքի ծավալների աճը:

Երկրորդ ծրագրի շրջանակներում, ընթացիկ տարում նախապատրաստական աշխատանքներն են իրականացվել՝ նախատեսված 8 մարզի 25 համայնքի փոխարեն, 55 համայնքում, իսկ ջրարբիացման և գյուղտեխնիկայի տրամադրման հիմնական աշխատանքները համայնքներում կմեկնարկեն 2016 թվականին:

Արժեշղթայի զարգացման շրջանակներում նախատեսվում է աջակցություն տրամադրել տեղական արտադրողներին և վերամշակողներին՝ իրենց արտադրանքը ստանդարտացնելու, տնտեսություններում արտադրվող ապրանքի որակն ու կիրառվող պատշաճ գյուղատնտեսական չափորոշիչները բարելավելու, սննդամթերքի անվտանգության ոլորտում առկա փորձը ներդնելու, վերամշակման, պահպանման, արտադրանքի մշակման, շուկայահանման և արտադրանքի որակի ապահովմանն ուղղված միջոցառումները բարելավելու, ապրանքանիշեր գրանցելու և հավաստագրելու նպատակով: Արդեն իսկ կայացել է արժեշղթայի զարգացման ծրագրերի առաջին փուլի մրցույթը, որի արդյունքում հաղթող է ճանաչվել 16 բիզնես-հայտ:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՆՏԱՌՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Աշխատանքային տարին մոտենում է ավարտին, և «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ն ամփոփում է տարեկան գործունեությունը: 2015 թ. ՊՈԱԿ-ի կողմից մշակվել և ՀՀ ԳՆ է ներկայացվել տարեկան գործունեության ժամանակացույցը, որն իր մեջ ներառում է ՀՀ անտառներում իրականացվող միջոցառումների և աշխատանքների դիտարկում-ուսումնասիրություն, որոնցից առավել կարևորվում են անտառների պահպանության և պաշտպանության վիճակի դիտարկումները, հակահրդեհային անվտանգության կանոնների պահպանման, անտառապատման և անտառվերականգնման աշխատանքների ուսումնասիրությունները:

Անտառպահպանության վերաբերյալ հարկ է նշել, որ տարեցտարի նկատելի է պահպանության ոլորտում ընդգրկված աշխատակիցների զգոնության բարձրացում (չնայած հանդիպող ապօրինի հատման դեպքերի), ինչը կապված է երկրում առկա սոցիալ-տնտեսական ոչ բարենպաստ պայմանների հետ:

Անտառպաշտպանության մասով պետք է փաստել, որ տարվա ընթացքում առանձնակի խոշոր օջախներ չեն հայտնաբերվել: Այնուամենայնիվ տարվա ընթացքում հրդեհների բազում դեպքեր են գրանցվել, սակայն անտառածածկ տարածքներին հասցված վնասը բավականին քիչ է եղել՝ շնորհիվ ՀՀ ՏԿԱԻՆ աշխատակիցների, համայնքների բնակչության և անտառտնտեսությունների աշխատակիցների, ինչպես նաև՝ ՀՀ ԳՆ նախարարի հրամանով ստեղծված հրդեհների կանխարգելման և հրդեհաշիջման հանձնախմբի աշխատանքների:

Անտառվերականգնման և անտառապատման ոլորտում հատկանշական են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի՝ «Ճամբարակի», «Արծվաբերդի», «Գյումրիի» անտառտնտեսության մասնաճյուղերում իրականացված անտառապատման աշխատանքները շուրջ 35 հա-ի վրա, որտեղ ապահովված էր թե տնկարկի բարձր կպչողականությունը, թե տնկման ագրոտեխնիկան, և թե անհրաժեշտ խնամքի աշխատանքները՝ խոտհունձ, փխրեցում և այլն: «Անտառապատման աշխատանքները, բնականաբար, չի կարելի համարել բավարար ծավալի, սակայն նկատելի է կատարվող աշխատանքների որակի բարձրացում, ինչը հավատ է ներշնչում, որ մոտ ապագայում կհամալրվի մեր հանրապետության անտառների կազմը»,- նշել է կենտրոնի տնօրեն Ա. Գյուլխասյանը:

Համագործակցելով ՀՀ բնապահպանական հասարակական կազմակերպությունների հետ՝ բացի գրասենյակային մի շարք հանդիպումներից, «ԱՊՄԿ» ՊՈԱԿ-ը ձեռնամուխ է եղել համատեղ դիտարկումներ իրականացնել ՀՀ ԳՆ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և ՀՀ ԲՆ բնության հատուկ պահպանվող անտառային տարածքներում:

Տարվա ընթացքում կենտրոնը ակտիվ գործունեություն է ծավալել նաև միջազգային և տեղական կազմակերպությունների հետ՝ մասնակցելով մի շարք սեմինարների, զեկույցների և աշխատանքային քննարկումների, որտեղ առաջ է քաշել իր ուրույն տեսակետները և առաջարկները հանրապետության բնապահպանական հիմնախնդիրների լուծման վերաբերյալ: Համագործակցության շրջանակներում առանձնակի ուշադրության է արժանի ԳՄԸՀ (GIZ) կազմակերպության հետ ձեռքբերած համաձայնագիրը, որի շրջանակներում, կենտրոնի գործունեության շուրջ 10 տարիների ընթացքում, առաջին անգամ աշխատանքային փորձի ձեռքբերման հնարավորություն ընձեռնվեց ՀՀ «Հայաստանի ազգային ագրարային համալսարանի» երկու ուսանողների:

Ամփոփելով տարվա գործունեությունը՝ կենտրոնի տնօրեն Ա. Գյուլխասյանը նշել է, որ բնության պահպանության գործում պետք է ներգրավել ոչ միայն պետական լիազոր մարմիններին, այլ նաև հասարակության մեջ արթնացնել բնության հանդեպ հոգատարություն, որպեսզի բնօգտագործումը ունենա շարունակական բնույթ:

«ԱՊՄԿ» ՊՈԱԿ

ԾՐԱԳԻՐ

ՄԱՐԶՈՒՄ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԽԹԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Վերջերս Վայոց ձորի մարզպետարանի դահլիճում տեղի ունեցավ Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն (ՕԳԱՆ) դրամաշնորհային ծրագրի վերաբերյալ տեղեկատվական հանդիպումը:

Ծրագիրն իրականացվում է Ավստրիական զարգացման գործակալության կողմից: Միջոցառմանը մասնակցում էին՝ Վայոց ձորի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի ֆերմերներ, ԳԱՄԿ-երի ներկայացուցիչներ, ֆերմերային միություններ, վերամշակողներ, ովքեր հետաքրքրված էին օրգանական գյուղատնտեսության զարգացման ծրագրով: Դրամաշնորհային ծրագրի ղեկավար Քրիստինե Գրիգորյանը ողջունելով ներկաներին՝ ներկայացրեց ծրագրի նպատակը, պայմանները և կարևորությունը: Նա նշեց, որ առաջնությունը տրվելու է ավանդական գյուղատնտեսությունից դեպի օրգանականը անցում կատարող և արդեն օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող ֆերմերներին, փոքր ֆերմերային խմբերին: Տրվելու է փոքրածավալ և մեծածավալ դրամաշնորհային ծրագրեր իրականացնելու հնարավորություն. փոքրածավալ դրամաշնորհային ծրագրի համար կարող են դիմել ֆերմերներ, ֆերմերային միություններ, կոոպերատիվներ: Իրավաբանական անձի կարգավիճակի առկայությունը պարտադիր չէ: Իսկ մեծածավալ դրամաշնորհի համար կարող են դիմել գյուղատնտեսական մթերքների վաճառքով զբաղվողները:

Միջոցառման ընթացքում պարզաբանումներով հանդես եկան «Կանաչ Արահետ» գյուղատնտեսության աջակցության ՀԿ-ի նախագահ Նունե Սարուխանյանը և «ԷԿՈԳԼՈԲ» ՍՊԸ-ի տնօրեն Նունե Դարբինյանը: Վերջիններս ներկայացրեցին Օրգանական գյուղատնտեսության ծագումը, պատմությունը, հեռանկարները Հայաստանում՝ հավելելով, որ Օրգանական գյուղատնտեսության հիմքը դրվել է 1960թ. Անգլիայում, իսկ Հայաստանում՝ 2002թ. ստեղծվել է օրգանական գյուղատնտեսության ազգային պլանը: «Հայաստանի բնակլիմայական պայմանները խիստ նպաստավոր են օրգանական գյուղատնտեսության համար»,-մասնավորեցրեց տիկին Սարուխանյանը: Օրգանական գյուղատնտեսությունը հավաստող սերտիֆիկատը ֆերմերին տրվում է 2 փուլով՝ հսկողություն և սերտիֆիկատի տրամադրում: Սերտիֆիկացման գործընթացի կարևոր պայմաններից մեկն էլ՝ հողատարածքի գտնվելու վայրն է, այն պետք է հեռու լինի մայրուղուց և գործարաններից:

Հանդիպման ավարտին՝ մասնակիցները հնչեցրեցին իրենց հուզող հարցերը և ստացան մանրակրկիտ պատասխաններ: Վերջում ծրագրի ղեկավար Ք. Գրիգորյանն ավելացրեց, որ ծրագրի մեկնարկի ժամանակ կրկին կայցելեն Վայոց ձորի մարզ և շահագրգիռ կողմերին կտրամադրեն դրամաշնորհային ծրագրին մասնակցելու վերաբերյալ համապատասխան հայտադիմումները:

Վայոց ձորի ԳԱՄԿ

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

2016 Թ. ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ ՇԱՏ ԵՆ

Մեր հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացումը երկրի համար հեռանկարային ծրագիր է, իսկ գյուղատնտեսության զարգացման համար՝ ամենակարևոր խնդիրը:

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում, «Մարտունի համայնքի արոտօգտագործողների միավորում» կոոպերատիվը վերջերս է կազմավորվել, դեռևս նորաստեղծ է և գյուղատնտեսական տեխնիկայի համալրման խնդիր ունի: Քառասուն անդամից բաղկացած կոոպերատիվի հիմնական նպատակը՝ հեռագնա արոտավայրերում անասնաբուծության զարգացումն է, ակնկալիքներ շատ ունեն: Կոոպերատիվի նախագահ Աշոտ Մուրադյանի կարծիքով, անասնապահության զարգացման արդյունքում կկարողանան ընդլայնել նաև կաթի և մսի արտադրությունը: Շատ ոգևորված են համախմբված աշխատանքի համար, սպասում են 2016թ. գյուղտեխնիկայի համալրումից հետո իրականացնել աշխատանքները: Առայժմ ձեռք են բերել երկու հատ Բելառուս Մ տրակտոր, 10 հատ ձեռքի իտալական խոտհնձիչ, երկու հնձիչ և երկու գութան: 2016թ. նախատեսում են տեխնիկան համալրել ևս երկու իտալական հակավորող պրեսներով և թրթուրավոր տրակտորով: Շուրջ 120 տնտեսություն ունեցող Մարտունի համայնքում հիմնական զբաղմունքն անասնապահությունն է: Կոոպերատիվի նախագահի կարծիքով՝ վստահության և աշխատասիրության արդյունքում, ֆերմերները կարող են ընդգրկվել նորաստեղծ կոոպերատիվի շարքե-

րում: Այժմ առաջին համագործակցության քայլեր են անում կաթի և մսի վերամշակող ընկերությունների հետ, քանի որ տարածաշրջանում մթերքի իրացումը բավականին լուրջ խնդիր է: Դեռևս լուծված չէ նաև ձեռք բերված գյուղտեխնիկայի կայանատեղիի հարցը, դոնոր կազմակերպությունների արձագանքին են սպասում: Նախագծանախահաշվային աշխատանքեր և ուսումնասիրություններ են կատարել, ֆինանսական հնարավորությունների առկայության դեպքում, կկարողանան լուծել խնդիրը: Մասնագիտությամբ ինժեներ-շինարար Աշոտ Մուրադյանն այսօր դպրոցում է աշխատում, ստացել է երկրորդ մասնագիտությունը՝ պատմության ուսուցիչ է: Շուրջ 15 տարվա աշխատանքային փորձ ունի, մինչ այդ գյուղխորհրդի նախագահ և համայնքի ղեկավար է եղել: «Տնտեսությունս ինքս եմ վարում, 25 գլուխ ոչխար, 4 կով և մեղվի փեթակներ ունեմ. կոոպերատիվի աշխատանքներին զուգահեռ, շարունակելու եմ ավելացնել նաև կենդանիների գլխաքանակը: Կարծում եմ, մեր օրերում նման միավորումները կավելացնեն համայնքի բնակիչների եկամուտները, քանի որ համախմբված աշխատանքն իր արդյունքը տալիս է»:

Մարզի հաջորդ՝ Թթուջուր համայնքը գտնվում է Ճամբարակի տարածաշրջանում: Այստեղ հողերը շուրջ 15 տարի չեն վարվել, խոպան են: Բնակլիմայական պայմանները երկար ժամանակ խոչընդոտել են հողի մշակության, հատկապես՝ վարի աշխատանքների կատարմանը: Մի շարք խնդիրներ են հաղթահարել և անցնող տարում հասցրել են վարել 40 հա հողատարածք. գարնանացանից հետո հասցրել են նաև աշնանացանը կատարել: Հաջորդ տարում նախատեսում են 150 հա վարի աշխատանք կատարել: «Թթուջուր համայքնի արոտօգտագործողների միավորում»-ի կողմից իրականացված աշխատանքներն արդյունք են տվել: «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում, ներկրվել է «Բելառուս» մակնիշի 2 տրակտոր, 2 հակավորող սարք, տրակտորի 1-ական հնձիչ և հավաքիչ, ձեռքի 4 հնձիչներ: Իսկ «Շեն» բարեգործական հիմնադրամի միջոցներով, գյուղատնտեսական կենդանիների համար փորձում են լուծել կացարանների կառուցման աշխատանքները, բարելավվել սարամասեր տանող ճանապարհները:

«Շեն»-ի աջակցությամբ, համալրվել է նաև գյուղատնտեսական տեխնիկան, ձեռք բերվել շարքացան, կուլտիվատոր, «Բելառուս» մակնիշի տրակտորի գութան: Կոոպերատիվի վարչության անդամ Միհր Արամյանն աշխատում է գյուղապետարանում՝ որպես գյուղատնտես: Մասնագիտությամբ աշխարհագրագետ է, սակայն, սեփական փորձի և այդ ոլորտում ծնողներից ստացած գիտելիքները հնարավորություն են տալիս հասկանալ հողի լեզուն: Ըստ նրա՝ գյուղացին գոհ է աշխատանքի կազմակերպման եղանակից, քանի որ շուկայականից մատչելի գներով են իրականացվում աշխատանքները: Նույնիսկ հարևան գյուղերն են օգտվում գյուղտեխնիկայի ծառայություններից: Մ.Արամյանը հավելեց նաև, որ 2016թ. ակնկալիքներ շատ ունեն, նախատեսում են վարելահողերի մի մասը դարձնել մշակովի, կվարվի ևս 150 հա հողատարածք:

Լիանա Շախնազարյան

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԸ ՄԵԾ Է ՈՉ ՄԻԱՅՆ ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ...

«Ջերմատնային ասոցիացիան» ստեղծվել է 1999թ. -ին: Այսօր այն ունի 23 անդամ՝ 12 հա ջերմոցով: «Մեր նպատակն է, նոր տեխնոլոգիաների ներդրման ճանապարհով, բարձրացնել ջերմատնային մշակաբույսերի բերքատվությունը, որի արդյունքում միաժամանակ կիջնի նաև ինքնարժեքը և տնտեսությունները կկարողանան դիմակայել մրցակցությանը»,- ասում է ասոցիացիայի գործադիր տնօրեն Պողոս Գևորգյանը:

Ջերմոցային տնտեսության համար անհրաժեշտ նոր տեխնոլոգիաներ տրամադրում են հիմնականում զարգացած տնտեսություններ ունեցող եվրոպական երկրները՝ Հոլանդիան, Իսպանիան, Իտալիան և այլն: «Յուրաքանչյուր նորարարական ներդրում շատ թանկ արժե, որոնց իրականացման համար ցածր տոկոսադրույքներով վարկեր են հարկավոր: Միայն այդ դեպքում կարող են գոյատևել հայաստանյան ջերմոցային տնտեսությունները և շարունակել իրենց գործունեությունը»,-նշում է գործադիր տնօրենը:

Վերջերս կայացած Հայ–ռուսական գործարար համաժողովում ասոցիացիայի և Մոսկվորեցկի առևտրի տան միջև ստորագրվել է հուշագիր՝ Հայաստանից ոչ միայն ջերմոցային ապրանքների, այլև գյուղատնտեսական այլ մթերքների (միրգ և բանջարեղեն) արտահանման վերաբերյալ: Ինչ վերաբերում է ջերմոցային մշակաբույսերի ռուսական կողմի պահանջարկին, ապա ամսական այն կազմում է 1480 տոննա: Ռուսաստանին առավելապես հետաքրքրում են Հայաստանի ջերմատներում աճեցված տարբեր սորտերի լոլիկներն ու վարունգները: «Այդ պահանջարկը բավավարելու համար ասոցիացիան պետք

է ստեղծի սառնարանային տնտեսություն, որտեղ կպահեստավորվեն տարբեր ընկերություններից հավաքված բանջարեղենը, այնուհետև՝ համապատասխան տեխնիկայով սորտավորումից հետո, կարտահանվեն: Նախատեսել ենք ստեղծել նաև համապատասխան լաբորատորիա, որպեսզի տեղում ստուգվի արտահանվող արտադրանքի որակը»,- տեղեկացնում է Պողոս Գևորգյանը: Ասոցիացիայի անդամները, առկա պահանջարկը բավարարելու նպատակով, նախատեսել են ընդլայնել ջերմոցային տարածքները: Պողոս Գևորգյանի կարծիքով՝ հանրապետությունում առկա է նաև ջերմոցային մասնագետների պակաս: Ասոցիացիան նախաձեռնում է իրականացնել նաև վերջիններիս պատրաստման գործընթացը, ովքեր այնուհետև մասնագիտական ծառայություններ են մատուցելու ջերմատներում: «Նշված ծրագրերի իրականացման համար առայժմ ֆինանսական աղբյուրներ են որոնվում, զգալի է նաև պետական աջակցության անհրաժեշտությունը», -հավելում է Գևորգյանը:

Ինչ վերաբերում է ռուսական շուկային, ապա տնօրենի կարծիքով՝ առկա պահանջարկը բավարարելու համար մի շարք կազմակերպչական աշխատանքներ են իրականացվելու: «Կարծում եմ, առաջին խմբաքանակն արտահանելուց հետո կմեծանա հայ ֆերմերների ոգևորությունը և կվերագործարկվեն ոչ միայն առկա պարապուրդի մատնված ջերմոցները, այլև նոր տնտեսություններ կստեղծվեն»,- տեղեկացնում է ասոցիացիայի տնօրենը: Փոքր ջերմատներում այս օրերին սկսվել են ցանքի աշխատանքները: Հունվարին կստացվեն առաջին սածիլները, որոնք կտնկվեն գարնանը:

Բերքահավաքը սկսվում է ապրիլից: Պողոս Գևորգյանը նշեց, որ աշխատանքի այդօրինակ կազմակերպման պատճառն այն է, որ ջերմոցները ձմռան ամիսներին, գազի բարձր վարձավճարների պատճառով, չեն տաքացվում: Ինչ վերաբերում է արտահանմանը, ապա Պողոս Գևորգյանը, այս առումով կարևորեց ոչ միայն ռուսական, այլև Արաբական Միացյալ Էմիրությունների և հարակից այլ երկրների շուկաների առկայությունը, որոնցում նույնպես, որակական բարձր և համային հատկանիշների շնորհիվ, մեծ է հայկական արտադրանքի պահանջարկը, որին նաև՝ սպասում են:

Նելլի Սահակյան

ՈՒՍՈՒՑՈՒՄ

ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԱՐԺԵՔԸ

Դորա Ռամզին ունի ավելի քան 33-ամյա փորձ բարձրագույն կրթության ոլորտում: 2003-2004 թթ. Դր. Ռամզին 18 ամիսների ընթացքում աշխատել է որպես խորհրդատու Ագրոգիտասփյուռում (գյուղատնտեսական խորհրդատվության բաժին): Նա նաև 14 տարի դասախոսել է Վաշինգտոնի Պետական Համալսարանում՝ որպես խորհրդատվական բաժնի վարիչ: Թոշակի անցնելուց հետո նաև աջակցել է «Կանաչ արահետին»՝ որպես կամավոր: Սույն թվականի նոյեմբերի 20-ից դեկտեմբերի 6-ը, «ՎԻՍՏԱԱ Փորձագիտական Կենտրոն» խորհրդատվական կազմակերպության (ACDI/VOCA) «Ֆերմերից ֆերմերին» ծրագրի շրջանակներում, նա կրկին Հայաստանում էր: Կամավորական հիմունքներով Դր. Դորա Ռամզին աջակցեց «Կանաչ արահետ» ՀԿ-ին՝ տրամադրելու կարողությունների զարգացման և կազմակերպչական արդյունավետության դասընթաց ֆերմերների և ֆերմերային խմբերին, ինչպես նաև նույնականացնելու ցանկալի դասընթացների կարիքները, որոնք նախատեսվում է անցկացել Կանաչ ուսուցման կենտրոնում:

Մասնագետն այցելեց մի շարք մարզեր (Լոռի, Արմավիր, Արարատ, Վայոց ձոր) և հանդիպեց ֆերմերներին, խորհրդատուներին՝ դասընթացների կարիքների գնահատման համար: Այս հանդիպումների ընթացքում նույնականացվել են ֆերմերների և ֆերմերային խմբերի համար դասընթացների կարիքները, ինչպես օրինակ՝ հողի որակի բարելավում, կաթիլային ոռոգում, օրգանական պարարտանյութերի կիրառություն, համայնքային զարգացման ծրագեր, պրակտիկ դասընթացներ, բերքի որակի բարելավում, բերքի պահպանում, գյուղատնտեսական ներդրումներ, վնասատուների դեմ պայքար, յուրաքանչյուր մշակաբույսի համար առանձին հաշվարկ, սերմերի, տնկիների, և բույսերի նոր տեսակներ, մարքեթինգ, ֆերմերային խմբերի միջև տեղեկատվության փոխանակում և այլն: Դր. Ռամզին նաև դասընթաց է անցկացրել Կանաչ ուսուցման կենտրոնի, «Կանաչ արահետի» աշխատակիցների և ֆերմերային խմբերի առաջնորդների հետ:

Կանաչ ուսուցման կենտրոնը նորաստեղծ կազմակերպություն է, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզում: Կենտրոնն ունի մոտ 3000 մ² գյուղատնտեսական տարածք, ներշենքային և բացօթյա լսարաններ: Հողատարածքը կծառայի որպես փորձացուցադրական տարածք՝ օրգանական մրգերի, բանջարեղենի, խոտաբույսերի և այլ մշակաբույսերի համար: Կանաչ ուսուցման կենտրոնի նպատակն է՝ աջակցել ֆերմերներին բարելավելու իրենց գյուղատնտեսական գիտելիքներն ու հմտությունները և բարձրացնել գյուղատնտեսական մշակաբույսերի արժեքն ու որակը Հայաստանում:

«Կանաչ արահետ» ՀԿ

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ՏԻՄ-ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՇԱՀՈՒՄ Է ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

«Լուկաշինի գյուղատնտեսական ասոցիացիա» սպառողական կոոպերատիվը ստեղծվել է 2005 թ.՝ «Ամքոր» միջազգային կազմակերպության «FOSPA» ծրագրի շրջանակում: Սկզբնական շրջանում անդամների թիվը 42 էր, այժմ այն արդեն գերազանցում է 100-ը:

«Համայնքի բնակչությունը ինքնուրույն չէր կարողանում լուծել գյուղատնտեսության ոլորտի՝ իր առջև դրված խնդիրները: Տեղեկատվական

տարբեր աղբյուրներից իմացանք, որ «Ամքորի» և միջազգային այլ կազմակերպությունների աջակցությամբ ստեղծվում են գյուղատնտեսական կոոպերատիվներ, որոնք համատեղ են լուծում ծագած խնդիրները: Ստեղծեցինք ակտիվիստներից բաղկացած նախաձեռնող խումբ, ժողով հրավիրեցինք, որին մասնակցում էին նաև «Ամքորի» և «Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» («ԳԱՖ») հասարակական կազմակերպության ներկայացուցիչները:

Նրանց կողմից հանգամանալից ներկայացվեց կոոպերատիվի առանձնահատկությունները, առավելություններն ու կարևորությունը: Ժողովի 100-ից ավելի մասնակիցներից 42-ը միավորվեցին և ստեղծվեց «Լուկաշինի գյուղատնտեսական ասոցիացիա» սպառողական կոոպերատիվը»,- պատմում է կոոպերատիվի նախագահ Վարդգես Դավթյանը: Հետագայում շատ ծրագրեր են իրականացվել, որի արդյունքում կոոպերատիվը հզորացել է: Համատեղ ձեռք են բերել պարարտանյութեր, թունաքիմիկատներ, դիզելային վառելանյութ:

Կոոպերատիվի կայացման գործընթացի կազմակերպմանն աջակցում էր «Ամքորը», իսկ մասնագիտական խորհրդատվությունն ապահովում էր «ԳԱՖ»-ը: «Սկզբնական շրջանում համայնքի բնակիչները թերահավատորեն էին վերաբերում կոոպերատիվին՝ նույնացնելով այն ԽՍՀՄ –ի օրոք գոյություն ունեցող նմանատիպ կառույցների հետ: Սակայն, հետագայում տեսնելով մեր արդյունավետ գործունեությունը՝ շատերը միացան մեզ: Ի տարբերություն համայնքի մյուս բնակիչների՝ կոոպերատիվի անդամներն ավելի տեղեկացված են, տիրապետում են մասնագիտական հմտություններին, նրանց պարբերաբար խորհրդատվություն է մատուցվում»,- ասում է կոոպերատիվի նախագահը: Ստեղծել է 400 տոննա պահեստավորման հնարավորությամբ սառնարանային տնտեսություն, որից առայժմ գործում է 100 տոննա տարողությամբ սառնարանը: Ցավոք, մյուս սառնարանները ենթակա են վերանորոգման, որի համար ֆինանսական աղբյուրներ են որոնում:

Վարդգես Դավթյանի տեղեկացմամբ, կոոպերատիվը նույնպես մասնակիորեն պատրաստ է կատարել իր ներդրումները: Ընթացիկ տարում կոոպերատիվը ՌԴ է արտահանել 220 տոննա ծիրան, 40 տոննա սալոր և այլն: Այժմ սառնարաններում պահեստավորված է մեծ քանակությամբ դդում, որը ձմռան ամիսներին կվաճառեն վերամշակող ընկերություններին: Ի դեպ, կոոպերատիվին անդամակցում են նաև հարակից Խանջյան և Նորավան գյուղերի բնակիչները:

«CARD» հիմնադրամի և «Հեյֆեր Հայաստան» կազմակերպության տեխնիկական աջակցությամբ, և «Ամքորի» ֆինանսավորմամբ, կազմակերպել են չրերի արտադրություն: Քայլեր են արվում չրանոցները արևի էներգիայով գործարկելու ուղղությամբ: Վարդգես Դավթյանի կարծիքով, այդ դեպքում չրի ինքնարժեքը, ի շահ սպառողի, կստացվի ավելի ցածր: «Մենք պատրաստ ենք հանդես գալ համաֆինանսավորմամբ, եթե որևէ կազմակերպություն աջակցի արևային մարտկոցների ձեռքբերման ծրագրին», - նշում է կոոպերատիվի նախագահը:

Ծրագրերից մեկն էլ՝ օրգանական գյուղատնտեսության զարգացումն է, որն աչքի է ընկնում տնտեսական մեծ արդյունավետությամբ և եկամտաբերությամբ, իսկ դրա համար Լուկաշին գյուղում առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները: Ծրագրի իրականացման նպատակով առաջիկայում դիմելու են «Ավստրիական զարգացման գործակալությանը»: Ի դեպ, նախատեսել են արտադրել նաև օրգանական չրեր, այդ նպատակով առկա են համապատասխան այգետարածքներ, որոնք 4 տարի շարունակ մշակվել են օրգանական գյուղատնտեսության պահանջներով: Կազմակերպելու են նաև օրգանական եղանակով աճեցված մրգատեսակների մթերումներ:

«Լուկաշինի գյուղատնտեսական ասոցիացիա» սպառողական կոոպերատիվը զբաղվում է նաև կաթի ընդունմամբ: Այդ նպատակով «CARD»-ը հատկացրել է 1,6 տոննա տարողությամբ սառնարան: Մթերված կաթը հանձնում են «Աշտարակ կաթ»-ին և վերամշակող այլ ընկերությունների: Կոոպերատիվին անդամակցող տնտեսություններին հատկացվել են ավտոմատ կթի սարքավորումներ: Նշենք, որ կոոպերատիվն ապահովված է նաև գյուղատնտեսական անհրաժեշտ տեխնիկայով: Սպառողական կոոպերատիվը, գյուղապետերի հետ համատեղ, իր մասնակցությունն է ցուցաբերում նաև համայնքի զարգացման ծրագրերին: Նախորդ տարի մասնակիորեն վերանորոգվել են Լուկաշինի բուժամբուլատորիան, իսկ ընթացիկ տարում՝ գյուղի մանկապարտեզը: Բացահայտելով համայնքի

կարիքները՝ կոոպերատիվը ծրագրային առաջարկներով դիմում է դոնոր կազմակերպություններին, որոնց աջակցությամբ իրականացնում է նաև մշակութային, կրթական, առողջապահական և այլ ծրագրեր:

«Իմ կարծիքով, կոոպերատիվը չպետք է լինի տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) կցորդ, այլ պետք է լինի անկախ: Կոոպերատիվի նախագահին պետք է ընտրի ոչ թե գյուղապետը, այլ համայնքի բնակչությունը, որպեսզի վերջինիս գործունեությունը լինի արդյունավետ: Անշուշտ, առկա է կոոպերատիվ-ՏԻՄ համագործակցության անհրաժեշտությունը: Արդյունքում՝ շահում է բնակչությունը», - եզրահանգում է Վարդգես Դավթյանը:

Նրա կարծիքով՝ կոոպերատիվները պետք է օգտվեն նաև պետության կողմից հատկացվող սուբսիդիաներից: Նրանց պետք է տրամադրվի սուբսիդավորված դիզելային վառելանյութ, թունաքիմիկատներ, պարարտանյութեր և այլն: Դրանք կոոպերատիվը պետք է բաշխի իր անդամներին: Լուկաշինի կոոպերատիվն իր պահանջներն է ներկայացնում նաև ջրօգտագործողների ընկերությանը, հանդես է գալիս իր պահանջներով, առաջարկներով և կոոպերատիվի անդամների շահերի պաշտպանությամբ:

Նելլի Սահակյան

ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

ՀԳՇՆ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄՆ ՈՒ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Հայաստանում և ԱՊՀ երկրներում հսկայածավալ նախագծային աշխատանքներ է իրականացնում 1963 թ. հիմնադրված Քաղաքաշինական բնագավառի նախագծային ինստիտուտը, ներկայումս՝ ՀԳՇՆ (ՀԱՅԳՅՈՒՂԻՆՆԱԽԱԳԻԾ) ընկերությունը: 1996թ. ՀԳՇՆ ընկերության գլխավոր տնօրեն Վարուժան Հովասափյանը բազմաթիվ կարևոր և պատասխանատու կառույցների նախագծերի հեղինակ է, ՀՀ և միջազգային մի շարք մրցանակների դափնեկիր, քաղաքաշինության ոլորտում նախագծման և նախագծերի իրականացման փորձառու մասնագետ: Նրա կառավարման գործունեության սկզբունքներն են՝ կառավարման ժամանակակից հմտությունների կիրառումը, նորարարական մոտեցումներն ու նոր տեխնոլոգիաների ներդրումները, շրջակա միջավայրի հետ համահունչ կառույցների նախագծումն ու կառուցումը:

Վ. Հովասափյանի ղեկավարած բազմաթիվ ծրագրերից են՝ Վայոց ձորի, Մեղրիի ինքնահոս ոռոգման համակարգի աշխատանքների իրականացումը, ինչպես նաև՝ «Հազարամյակների մարտահրավերներ» ծրագրով, վեց ինքնահոս ոռոգման, ՀՀ 20 տարածաշրջանների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման նախագծերը և այլն:

Ընկերությունը նախագծային աշխատանքներ իրականացնելու նպատակով, համագործակցելով գերատեսչությունների հետ՝ արժանացել է ՀՀ քաղաքաշինության նախարարության առաջին կարգի մրցանակի՝ (Տաթև և Ծաղկահովիտ համայնքների գլխավոր հատակագծերի նախագծման համար), Ղազախստանի կառավարության պատվոգրին, ՌԴՎՆի Սամարայի Շինարարության Դեպարտամենտի դիպլոմին, ՀՀ կառավարության շնորհակալագրին և բազմաթիվ այլ մրցանակների:

Նախագծային այս ինստիտուտը կարողացել է իր կառուցվածքում ընդգրկել քաղաքաշինության բնագավառում պահանջարկ ունեցող նախագծային աշխատանքներ՝ ոռոգման համակարգերի արդիականացման տարածաշրջանային ծրագրերի մշակում, տեխնիկատնտեսական հիմնավորումներ, պիլոտային ծրագրեր, ոռոգման համակարգեր և հիդրոտեխնիկական կառույցներ (ջրանցքներ), ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր…

ՀԳՇՆ-ի իրականացվող ծրագրերն ուղղված են նաև գյուղական ենթակառուցվածքների զարգացմանը՝ ապահովելով գյուղական բնակավայրերի կայուն զարգացումը՝ ջրամբարներ, ոռոգման համակարգեր, ջրարբիացում, պոմպակայաններ, հասարակական շենք- շինություններ, բնակելի թաղամասեր և տներ, գյուղատնտեսական արտադրության կառույցներ:

Հարկ է նշել ՀՀ ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրերից մի քանիսը՝ Արտաշատի երկրորդ կարգի ջրանցքի վերականգնում, ՁՕԸ-երի ոռոգման ջրանցքների վերանորոգման նախագիծ, Կոտայքի մայր ջրանցքի, Արամուսի դյուկերի վերակառուցման նախագծի, Մեղրիի ինքնահոս ոռոգման համակարգի վերջնական նախագծի պատրաստումը: Արարատյան դաշտի դրենաժային համակարգի վերականգնման նախագիծն իրականացվել է GITEC Consult GmbH (Գերմանիա) հետ համատեղ:

Գյուղական ենթակառուցվածքում ընկերության իրականացրած աշխատանքներից են նաև՝ գյուղատնտեսական նպատակների համար արտադրական, տնտեսական և օժանդակ շինությունների, խոշոր եղջերավորների համար անասնապահական համալիրների, ոչխարաբուծական ֆերմաների, բանջարային մշակաբույսերի ու ծաղիկների աճեցման համար ջերմատների, կաթի վերամշակման ու կաթնամթերքի արտադրության օբյեկտների կառուցումն ու նախագծումը:

Բազմաթիվ նախագծային աշխատանքներ ընկերությունն իրականացնում է՝ համագործակցելով ոչ միայն մեր հանրապետությունում գործող գիտական, շինարարական և նախագծային ընկերությունների, այլև՝ ֆրանսիական, շվեյցարական, իտալական, գերմանական ընկերությունների հետ: Մասնակցում է Համաշխարհային, Ասիական զարգացման, Եվրոպական վերակառուցման ու զարգացման, KFW բանկերի և, «Հայաստան» համահայկական հիմնադրամի ֆինանսավորմամբ, ՀՀ-ում իրականացվող ծրագրերին:

Նմանատիպ լայնամասշտաբ աշխատանքները շարունակական են, իսկ պարոն Հովասափյանն այդ աշխատանքներն իրականացնում է հիմնական անձնակազմում ընդգրկված ճարտարապետների, ինժեներների, տնտեսագետների, բնապահպանների հետ միասին:

ՄԱՆՎԵԼ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԿԱՆԱՆՑ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՇԱԲԱԹ

ԿԱՆԱՆՑ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ ՆՇՎԵՑ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերջերս Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան (ՀԵԿԱ) և ՀՀ Կին ձեռներեցների ցանցը (ՀՀ ԿՁՑ) Հայաստանում նշեցին Կանանց ձեռներեցության հայաստանյան շաբաթը, որն ըստ էության, հանդիսանում էր հունիսին կայացած Կանանց ձեռներեցության միջազգային համաժողովի շարունակությունը: Այն կազմակերպվել էր Ձեռներեցության համաշխարհային շաբաթի շրջանակներում, որին միացել է աշխարհի ավելի քան 140 երկիր:

Կանանց ձեռներեցության շաբաթի շրջանակներում, ՀԵԿԱ-ն նշեց նաև

Կանանց ձեռներեցության միջազգային օրը, որը հաստատվել է ՄԱԿ-ի կողմից՝ 2014 թվականին: Կանանց ձեռներեցության միջազգային օրը (womenseday.org) համաշխարհային շարժում է, որին մասնակցում է շուրջ 150 երկիր: Շարժումը նպատակ ունի խրախուսելու, աջակցելու և տոնելու կանանց ձեռներեցությունն ամբողջ աշխարհում: 2015 թ.-ից ՀԵԿԱ և ՀՀ ԿՁՑ նախագահ Լիլիթ Ասատրյանը Կանանց ձեռներեցության միջազգային օրվա WED Հայաստան դեսպանն է, իսկ ՀԵԿԱ-ն՝ Կանանց ձեռներեցության միջազգային օրվա իրականացնողը:

Կանանց ձեռներեցության հայաստանյան շաբաթի նպատակն է՝ նպաստել Հայաստանում ձեռներեցության խթանմանն ու հզորացմանը՝ գործունեության մասին առավել ընդգրկուն իրազեկման, կանանց ձեռներեցությանը խոչընդոտող գործոնների դիտարկման և Հայաստանում գործող կին ձեռներեցների միջև նոր գործընկերության հաստատման միջոցով: Ներկաներին ողջունեց Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի (ՀԵԿԱ), ՀՀ Կին ձեռներեցների ցանցի (ՀՀ ԿՁՑ) և FCEM-Հայաստան նախագահ, WED Հայաստան դեսպան Լիլիթ Ասատրյանը:

Կլոր-սեղան քննարկումներին ողջույնի խոսքով և ելույթներով հանդես եկան Հայաստանում Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչ Դեյվիդ Դոլը, UNIDO Հայաստանի գործառույթների ղեկավար Անահիտ Սիմոնյանը, ՀՀ ՓՄՁ ՁԱԿ-ի գործադիր տնօրենի տեղակալ Կարեն Գևորգյանը, ՎՁԵԲ Փոքր բիզնեսի աջակցման ծրագրերի մասնագետ Ձառա Օհանյանը:

Կանանց ձեռներեցության միջազգային օրվա տոնկատարությանը մասնակցեցին «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի շահառուներ, ՀՀ կին ձեռներեցների ցանցի անդամներ, ոլորտը ներկայացնող պետական և միջազգային գործընկերներ:

Մասնակիցների թվում էին ՀՀ-ում ԵՄ պատվիրակության Մարդու իրավունքների հարցերի պատասխանատուն, ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատան Մշակույթի և համագործակցության հարցերով բաժնի ներկայացուցիչը, ՀՀ ՓՄՁ ՁԱԿ ներկայացուցիչը:

Մասնակիցների թվում էին նաև հաջողակ կին գործարարներ, ինչպիսիք են «Հալեպ» Արևելյան քաղցրավենիքների արտադրամասի սեփականատեր Ալին Մասրլյանը, «Հայ Լանդզ Էկո Վիլիջ Ռիզորթի» հիմնադիր Քերոլայն Ձաքարյանը «Արտ Բրիջ» գրախանութ-սրճարանի գործադիր տնօրեն Շաքե Հավան-Գարապետյանը և այլք:

Կանանց ձեռներեցության հայաստանյան շաբաթի ընթացքում Վանաձորում կայացավ քննարկում՝ «Կանանց ձեռներեցության իրավիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայով, միաժամանակ ամփոփվեցին «Իմ հաջողակ բիզնեսը» խորագրով ֆոտոմրցույթի արդյունքները:

Փորձի փոխանակման այցեր կազմակերպվեցին ՀՀ Լոռու և Կոտայքի մարզերի ՀԵԿԱ ԿՁՑ անդամների ձեռնարկություններում, եղան Կարինե Ղուկասյանի «Կարեն-Կառա» կաթի վերամշակման արտադրամասում, որտեղ Լիլիթ Ասատրյանը պարգևատրվեց շնորհակալագրով: Կաթի մշտական ապահովման նպատակով գործում է ֆերմերային տնտեսություն, միաժամանակ կատարում են նաև մթերումներ ֆերմերներից: ՀԵԿԱ-ի տրամադրած դրամաշնորհով արտադրամասի համար ձեռք են բերել ժամանակակից տեխնիկա և սարքավորումներ՝ կարագհարիչ, անալիզատոր և այլն: «Նախքան դրամաշնորհ ստանալը, մասնակցել եմ ՀԵԿԱ-ի սեմինարներին, ինչն ինձ օգնեց ավելի մասնագիտանալ: Արդյունքում՝ էլ ավելի է բարելավվել արտադրանքի որակը, ընդլայնվել տեսականին»,- ասում է Կարինե Ղուկասյանը: Ի դեպ, կին գործարարին է շնորհվել նաև ֆոտոմրցույթի հաղթողի կոչումը:

Այցի մասնակիցները եղան նաև Գայանե Խաչատրյանի «Էբրիկոտ» հուշանվերների, Ռուզաննա Դանիելյանի «ՌուզԴան» կարի (ք. Վանաձոր), և Անահիտ Ձաղինյանի խմորեղենի արտադրամասերում (ք. Ալավերդի): Առանձնակի հետաքրքրություն ներկայացրեց Արմենուհի Աղաբաբյանի չրանոցը, որտեղ արտադրվում է բացառապես բնապահպանորեն մաքուր չիր:

Արմենուհի Մամյանի հացի և խմորեղենի արտադրամասը, որը թեև փոքրաթիվ աշխատատեղեր է ապահովվում (ելնելով արտադրանքի ծավալից), այնուամենայնիվ, աշխատողները գոհ են, քանի որ ունեն մշտական աշխատանք և կայուն աշխատավարձ:

Կոտայքի մարզում փորձի փոխանակման նպատակով, այցելուները եղան ՀԵԿԱ ԿՁՑ անդամներ՝ Քերոլայն Ձաքարյանի «Հայ Լանդզ Էկո Վիլիջ Ռիզորթ» (գ. Գեղադիր) ընկերությունում, որի հողատարածքներում աճեցվում են օրգանիկ մրգեր և բանջարեղեն, գործում է այծաբուծական տնտեսություն: Ընկերությունն աշխատատեղեր է ապահովում թե՛ Գեղադիր, և թե՛ հարակից համայնքների բնակիչների համար: Այցի ընթացքում գործարար կանանց համար համագործակցության նոր եզրեր բացվեցին, ծնվեցին նոր մտահղացումներ ու ծրագրեր:

Նելլի Սահակյան

ԳՅՈՒՂԱԲՆԱԿ ԿԵՆՍՅՔ

«ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵՋ ՊԱՀԱՆՋԿՈՏ ԵՄ...»

Օրը թանկ է նրա համար, ով կարողանում է գնահատել ժամանակը: Այս պարզ ճշմարտությունը փասնամյակներ շարունակ եղել է Սեդիկ Մարտիրոսյանի կյանքի խորհուրդն ու նաև ուղեկիցը:

Արարատի մարզի Լուսաշող գյուղ ավելի քան 42 տարի առաջ հարս եկած Սեդիկն իր հետ բերել էր Կամո քաղաքի (ներկայիս Գավառ) սովխոզ տեխնիկումում ստացած անասնաբույծի մասնագիտությունն ու ծնողներից ժառանգած աշխատասիրությունը: Գիտեր, որ միայն ամուսնուն թևութիկունք լինելով ու համատեղ աշխատանքով է հնարավոր հաղթահարել բոլոր դժվարությունները, ստեղծել բերք ու բարիք, և այդ դեպքում, ինչպես ժողովրդական առածն է ասում՝ աղքատությունը կվախենա աշխատողի տունը մտնելուց:

Ամուսնու հետ նախկին Կարախաչ, այսօր արդեն Լուսաշող կոչվող գյուղի սովխոզում աշխատած տարիներին զբաղվել են անասնապահությամբ, «իրար գլխի հավաքած» գումարով մի քանի հորթ են գնել ու սկսել բազմացնել, իսկ արդեն հողերի սեփականաշնորհման արդյունքում ձեռք բերած տարածքներում կառուցում են անասնագոմ, ավելացնում անասնագլխաքանակը, գնում անասնակեր և օրուգիշեր քրտնաջան աշխատելով, մեկը՝ երկուս, երկուսը՝ տասը դարձնելով, տունուտեղ են ստեղծում: Թեև Սեդիկի համար դժվար էր չորս երեխաների խնամքը համատեղել անասնապահության ու միաժամանակ հողագործական աշխատանքների հետ, այնուամենայնիվ, ժամանակի ճիշտ բաշխման, աշխատասիրության և համառության շնորհիվ, նրան հաջողվում էր լինել բոլոր «դիրքերում»:

Այսօր արդեն գյուղական իր ֆերմայում Սեդիկի խնամքի և հոգատարության տակ շուրջ 200 խոշոր եղջերավոր անասուն կա, որից 50-ը՝ կով, բացի դրանից, 10-15 ոչխար ու մի քանի նորածին գառներ կան: Ճիշտ է, հին անասնագոմում արդեն նեղվածք է, սակայն քիչ հեռվում կառուցված նորն ու ընդարձակը գարնանը պատրաստ է դիմավորելու իր «բնակիչներին»: «Լույսը դեռ չբացված՝ արդեն անասնագոմում եմ, մեկ առ մեկ ստուգում եմ անասունների վիճակը: Եթե հիվանդ են լինում, ինքս եմ բուժում, հետները զրուցում եմ, շոյում, նրանք էլ են փաղաքշանքի ու ջերմության կարոտ: Իմ հանգստի ժամը գիշերվա ժամը 1-ից 4-ն է, իսկ ամռանը՝ ավելի քիչ», - ասում է ֆերմերը: Աշխատանքը երբեք վերջ չունի, որովհետև ձգտող և արարող մարդու բարեկեցությունը ստեղծվում է միայն հետևողական աշխատանքի արդյունքում: Ամուսնու մահից հետո Սեդիկի թևութիկունքը զավակներն ու հարսներն են: Ճիշտ է, սեզոնային աշխատանքներին զգացվում է լրացուցիչ ձեռքի կարիք, բայց հիմնական աշխատուժը տան անդամներն են: Սեդիկի համոզմամբ՝ նրանց հետ աշխատելն ավելի հեշտ է, քան օտարի, որովհետև տան անդամը սրտացավ է, և հետո՝ ավելի հեշտ է ինքդ ճիշտն անես, քան ուրիշին մի քանի անգամ բացատրես նրա սխալները:

Ընտանիքում գերիշխող համերաշխությունը կանխում է օտար ափերում աշխատանք փնտրելու ցանկությունն ու մտադրությունը: «Երեք տղա ունեմ, մեկ աղջիկ: Տղաներիցս ոչ մեկը, աշխատանք փնտրելու հույսով, գյուղից հեռանալու, քաղաքում բնակվելու կամ երկրից դուրս գնալու ցանկություն չունի: Իսկ ո՞ւր գնան, եթե այստեղ էլ աշխատանք կա: Մեր երկիրը մեր տունն է, լինի հարուստ թե աղքատ, մերն է, մենք պետք է շենացնենք, օտարը մեր փոխարեն չի անի»,- համոզված է Սեդիկը:

Իրոք, աշխատանքից աչք բացելու ժամանակ չկա, պակաս աշխատատար չէ նաև ստեղծած նյութական բարիքների իրացումը: Հաճախ է պատահում, որ մթերման գնի հարցում կաթ կամ միս մթերող ընկերությունների ու անհատների հետ լեզու չեն գտնում: Նման դեպքերում կաթը վերածվում է պանրի, իսկ ո՞ւմ հայտնի չէ Կարախաչի պանրի համը, այն էլ՝ Սեդիկի պատրաստածի, որի համբավը բերնեբերան շրջում է շրջակա գյուղերից մինչ հեռավոր քաղաքները: Հաճախորդների պակաս, փառք Աստծո, չկա, ու ո՛չ պանիրն է մնում «սեղանին», ո՛չ միսը, հակառակ դեպքում՝ այլ բնամթերքի հետ փոխանակումը կա ու կա: Կարևորն այն է, որ այս փոքրիկ բիզնեսի ճանապարհին խոչընդոտներ չլինեն, իսկ չեն լինի, քանի որ Սեդիկը պետության հետ պարտք ու պահանջ չունի, հողի, շենք-շինությունների հարկերը պարտաճանաչ վճարում է, մեկ-մեկ վարկերն են նեղում, դե, դա էլ՝ կաշխատեն-կփակեն:

Խոսքի ու գործի մեջ պարտաճանաչ Սեդիկն իրեն բնութագրելիս էլ անաչառ է. «Շատ բարդ մարդ եմ, աշխատանքի մեջ պահանջկոտ եմ, ուզում եմ ամեն ինչ իր հունով, շիփ-շիտակ գնա: Իսկ սովորական մարդկային հարաբերություններում փխրուն եմ, սիրով օգնում եմ ինձ դիմած մարդկանց, լինի խորհրդով, թե նյութապես, գնահատում եմ ժամանակը և պարապ զրույցների վրա այն չեմ վատնում»:

Անուշ Ներսիսյան
Արարատի մարզ

ԱԳՐՈ Լրատու
Դեկտեմբեր 5 - 15, 2015 թ.
Թիվ 32 (2087)

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՕՐԳԱՆԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ

Օրգանական պարարտանյութերին են պատկանում գոմաղբը, թռչնաղբը, մարդաղբը, կենսահումուսը, տորֆը, կոմպոստները, կանաչ պարարտանյութերը և այլն: Սրանք պարունակում են բույսի բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ սննդատարրեր, բարելավվում են հողի կառուցվածքը, օդային և ջրային ռեժիմները, հարստացնում հողն օգտակար մանրէներով և օրգանական նյութերով:

Գոմաղբը պարունակում է ազոտ, ֆոսֆոր, կալիում, մագնեզիում, կալցիում, երկաթ, ցինկ, պղինձ և այլ տարրեր: Հարուստ է օրգանական նյութերով և օգտակար մանրէներով: Գոմաղբի որակը պայմանավորված է կենդանու տեսակով, պահպանման պայմաններով և ժամկետով: Մեծ քանակով ազոտ, ֆոսֆոր և կալիում պարունակվում է ոչխարի գոմաղբում և թռչնաղբում: Ամենաարժեքավորը՝ աղավնու և թռչնի ծերտն է:

Աղյուսակում բերված է որոշ կենդանական պարարտանյութերում հիմնական սննդատարրերի պարունակությունը (կգ/100 կգ՝ թաց զանգվածի

Գոմաղբ

հաշվով):

Գոմաղբի մեջ պարունակվող սննդատարրերի և օրգանական նյութերի մատչելիությունը կախված է դրա քայքայման, փտման աստիճանից: Որքան լավ է այն քայքայված, այնքան բարձր է օգտակար նյութերի յուրացումը բույսերի կողմից: Ընդ որում՝ գոմաղբի պարարտացնող ազդեցությունը հողում պահպանվում է մի քանի տարի:

Չքայքայված գոմաղբի օգտագործումը, որոշ դեպքերում կարող է վնասել բույսերին, օրինակ՝ եթե հող է մտցվում չքայքայված ծղոտի հետ համակցված թարմ գոմաղբ, ապա առաջին երկու ամսվա ընթացքում գոմաղբի ազոտը ծախսվում է ծղոտի քայքայման վրա, ինչի հետևանքով բույսերն ազոտի քաղց են զգում: Կիսաքայքայված գոմաղբ օգտագործելիս՝ հողում հանքային ազոտի քանակն անմիջապես բարձրանում է, քանի որ ծղոտի հիմնական զանգվածը գոմաղբի պահպանման ընթացքում, արդեն քայքայվել է: Որքան լավ է քայքայված գոմաղբը, այնքան բարձր է բերքի հավելումը:

Շատ կարևոր է գոմաղբի ճիշտ պահպանումը: Ոչ մեծ և փուխր կույտերով պահպանելիս, գոմաղբը շուտ չորանում է, իսկ նրանում առկա ազոտը ցնդում է կամ լվացվում անձրևաջրերով: Շատ ավելի վատ է, երբ աշնանը գոմաղբը շաղ է տրվում հողի մակերեսին: Այս դեպքում գոմաղբի օգտակարությունը դառնում է անիմաստ, քանի որ նրա միջից ազոտը, ֆոսֆորը, կալիումը և այլ տարրեր լվացվում են անձրևաջրերի կամ հալքի օգնությամբ:

Գոմաղբը ճիշտ հասունացնելու համար նախ՝ գետնին պետք է փռել 2-3 մ լայնությամբ տորֆ կամ մանրացված ծղոտ (20-25 սմ շերտով), այնուհետև վրան ավելացնել գոմաղբ՝ 1.0-1.5 մ բարձրությամբ: Կույտը տափանելուց հետո այն պետք է ծածկել տորֆով կամ ծղոտով, ապա՝ հողով: Գոմաղբը համարվում է հասունացած, երբ նրա մեջ ցամքարի և կերի կոշտ մնացորդները լրիվ քայքայվում են, իսկ կույտն ունենում է մուգ գորշավուն երանգ:

Գոմաղբով հողի պարարտացումը և մշակաբույսերի սնուցումը կախված են հողի տեսակից, բնակլիմայական պայմաններից, մշակաբույսի տեսակից, զարգացման փուլից և մի շարք այլ գործոններից: Այնուհանդերձ, նշենք, որ լոլիկի ցանքատարածությունների համար այն, միջին հաշվով, կազմում է 20-30, վարունգի համար՝ 60-70, կաղամբի և սոխի համար՝ 30-40, աշնանացան ցորենի համար՝ 15-20, կարտոֆիլի և խաղողի համար՝ 40, պտղատուների համար՝ 30 տ/հա:

Պետք է զգուշանալ թարմ գոմաղբի օգտագործումից: Օրինակ՝ գազարի ցանքերում թարմ գոմաղբի կիրառումը կտրուկ նվազեցնում է արմատապտուղների որակը: Խորհուրդ չի տրվում նաև թարմ գոմաղբով սնուցել սոխը և սեղանի այլ արմատապտուղներ:

Նպատակահարմար չէ կիրառել մեկ շաբաթ և ավելի ժամկետում խմորված գոմաղբը, քանի որ այդ ընթացքում

Թռչնաղբ

ամոնիակային ազոտի զգալի մասը ցնդում է: Ավելի լավ է գոմաղբաթուրմը պատրաստել առավոտյան, օրվա ընթացքում պարբերաբար խառնել, իսկ երեկոյան օգտագործել՝ ջրով 7-10 անգամ նոսրացնելուց հետո:

Թռչնաղբը կարելի է կիրառել վաղ գարնանը 0.5 կգ/քմ չափաքանակով: Լավ արդյունք է տալիս մշակաբույսերի սնուցումը թռչնաղբաթուրմով: Թաց ծերտով թուրմ պատրաստելուց հետո այն պետք է օգտագործել 12-15, իսկ չորացած ծերտով պատրաստելիս՝ 18-20 անգամ ջրով նոսրացնելուց հետո:

Աղյուսակ

Օրգանական պարարտանյութեր		Ազոտ	Ֆոսֆոր	Կալիում
Գոմաղբ	ոչխարի	0.86	0.47	0.67
	ձիու	0.59	0.28	0.63
	տավարի	0.54	0.23	0.50
	խոզի	0.45	0.19	0.60
	թռչնաղբ	1.5	1.5	0.80
	մարդաղբ	1.1	0.26	0.22
Տորֆ	վերին շերտ	0.35	0.03	0.03
	ցածր շերտ	1.05	0.14	0.07

Տորֆը պարունակում է բավարար քանակով ազոտ, սակայն այն մշակաբույսերի համար քիչ մատչելի է: Մյուս կողմից տորֆի մեջ շատ քիչ է ֆոսֆորի և կալիումի քանակը: Տորֆի արդյունավետության բարձրացման նպատակով այն օգտագործվում է կոմպոստների տեսքով՝ գոմաղբի, գոմաղբաթուրմի, մարդաղբի, ֆոսֆորիտային ալյուրի, կրի, մոխրի կամ այլ օրգանական և

Տորֆ

հանքային պարարտանյութերի հետ համատեղ:

Տորֆագոմաղբային կոմպոստների արդյունավետությունը զգալիորեն մեծանում է, երբ 1 բաժին գոմաղբը խառնվում է 5-8 բաժին տորֆի մեջ:

Մարդաղբը հարուստ է ազոտով, որի 70-80 տոկոսը կազմում է՝ բույսի կողմից շատ հեշտ յուրացվող ամոնիակային ազոտը: Նախքան օգտագործելը, մարդաղբը պետք է վարակազերծել, քանի որ այն կարող է պարունակել հիվանդաբեր բակտերիաներ և հելմինտների ձվեր: Այդ պատճառով խորհուրդ է տրվում պատրաստել տորֆային կոմպոստ, որի հասունացման ընթացքում, ջերմաստիճանի բարձրացման հետևանքով, (+60°C և ավելի) հելմինտների ձվերը ոչնչանում են:

Օրգանական և օրգանահանքային կոմպոստները շատ օգտակար են: Սրանց մեջ սննդանյութերը վերափոխված են առավել մատչելի ձևերի: Բացի դրանից օդի ազոտը ֆիքսող բակտերիաների գործունեության շնորհիվ, կոմպոստներում երբեմն ավելանում է ազոտի քանակը:

Ոչ մեծ այգիների և տնամերձ հողամասերի համար կարևոր նշանակություն ունեն հավաքածու կոմպոստները, քանի որ սրանք թույլ են տալիս լիովին օգտագործել բոլոր թափոնները՝ փրերը, բուսական մնացորդները, մոլախոտերը, չոր տերևները, տաշեղները, ծղոտը, օրգանական կենցաղային աղբը և այլն: Կոմպոստների պարտադիր բաղադրամասերից են տորֆը, հողը կամ տիղմը:

Կալիֆորնիական որդեր

Կոմպոստացումը պետք է կատարել ջուր չկուտակվող տեղանքներում, կամ էլ խրամատներում, ուր կոմպոստը քիչ է չորանում, հավասարաչափ է խոնավանում և արագ է հասունանում: Խրամատի լայնությունը պետք է լինի 1.5-2.0 մ, խորությունը՝ 0.8-1.0 մետր: Հատակին պետք է փռել տորֆ կամ հող՝ 20-25 սմ շերտով, այնուհետև նույն հաստությամբ՝ կոմպոստանյութ: Շերտավորումը պետք է կատարել հաջորդաբար՝ ամեն անգամ խոնավացնելով ջրով կամ գոմաղբահեղուկով: Դարսակույտի բարձրությունը պետք է լինի 1.5-2.0 մ՝ վերջում ծածկված 15 սմ-ից ոչ պակաս հաստություն ունեցող տորֆով կամ հողով:

Եթե կոմպոստում շատ են տաշեղները, ծղոտը, ապա անհրաժեշտ է ավելացնել ազոտական պարարտանյութ (10 կգ փայտանյութին՝ 300-350 գրամ ամոնիակի սուլֆատ): Կոմպոստի հասունացումը կախված է կոմպոստացվող նյութերի տեսակից և քանակից: Այն կարող է տևել 3-24 ամիս, ընդ որում՝ բաղադրանյութերը 2-3 ամիս անց հարկավոր է խառնել: Կոմպոստի միատարրությունը, գազերի առկայությունը վկայում են նրա պատրաստ լինելու մասին:

Պարկավորված բիոհումուս

Հելմինտների ձվերի լրիվ ոչնչացման համար տորֆամարդաղբային կոմպոստները պետք է հնացնել 2 տարուց ոչ պակաս:

Հավաքածու կոմպոստներն ավելի լավ է հող մտցնել գարնանը, իսկ մնացածները՝ աշնանը:

Կոմպոստների ծախսի չափաքանակը նույնն է, ինչ՝ գոմաղբինը:

Կենսահումուսը ստացվում է գոմաղբից՝ կալիֆորնիական կարմիր որդերի միջոցով: Այն պարունակում է 40-60 % հումուս, 10-20 % ազոտ, 1-3 % ֆոսֆոր, 1.3-2.3 % կալիում, 4.5-8.0 % մագնեզիում, 0.5-2.3 % երկաթ, 0.5-2.5 % պղինձ: Մեկ տոննա գոմաղբից ստացվում է 600 կգ կենսահումուս:

Կենսահումուսը նպաստում է սերմերի ծլունակությանը, կտրոնների արմատակալմանը, սածիլների կպչողականությանը, բերքի ավելացմանը, բույսերի դիմադրողականության բարձրացմանը, բերքի հասունացման ժամկետների կրճատմանը: Սրանով հողի պարարտացման չափաքանակը մեկ հեկտարի համար կազմում է 3.0-3.5 տոննա:

Մեկ տնկիի համար նախատեսված է 4.0-5.0 կգ, պտղատու ծառի համար՝ 10.0 կգ, սածիլների համար և կարտոֆիլի բներում՝ 100 գրամ, կանաչեղենի 1 քմ մակերեսին՝ 500 գրամ կենսահումուս:

Լևոն Աճեմյան
կենսաբանական գիտությունների թեկնածու

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է....

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԾԱՌ, ՓՈՂԻ ԾԱՌ

Ծառանման թանձրատերևուկը, որը հիշեցնում է փոքրիկ ամոր կաղնի, աշխարհում մեծ ճանաչում ունի:

Ծառանման թանձրատերևուկի հայրենիքը Հարավային Աֆրիկան է: Միգուցե հենց դա է պատճառը, որ այս բույսն այդքան լավ է պահում իր մեջ խոնավությունը: Դրան են նպաստում նաև հաստ, մսոտ տերևները, բույսը պատող մոմի շերտը: Գիշերվա ընթացքում թանձրատերևուկը կուտակում է ածխաթթու գազ, որը կլանում է օդից: Հետագայում այն վերածվում է խնձորաթթվի, և ջուրը գրեթե չի գոլորշիանում, իսկ խնձորաթթուն վերածվում է շաքարի: Գիտական անվանումն է՝ երջանկության ծառ: Այն շատ հեշտ է խնամելը, լավ է տանում լույսի պակասը, հազվադեպ է ջրվում, կայուն է վնասատուների և հիվանդությունների նկատմամբ, չորադիմացկուն է: Փողածառը քմահաճ չէ, դրա համար էլ մեծ տարածում ունի ծաղկասերների հավաքածուներում, հետն էլ՝ մանրէասպան է, հակավիրուսային ու հակաբորբոքային հատկություն ունի:

Թանձրատերևուկի տերևները, որոնք հիշեցնում են թեփիկներ և մի քանի սանտիմետրի հասնող երկարություն ունեն, կարող են լինել ամենազանազան ձևերի՝ կլորավուն, ոսպնյակաձև, նեղ և մախաթանման, լայն տերևային վահանիկով և տերևակոթով: Գույնը կարող է տատանվել մոխրագույնից ընդհուպ մինչև կարմիր: Ցողունի վրա տերևները դասավորվում են հերթականությամբ կամ միմյանց հանդիպակաց: Առավել տարածված է ծառանման թանձրատերևուկը (C. arborescens (Mill.) Willd.)՝ ձվաձև, 2-3 սմ լայնությամբ, հաճախ կարմրավուն եզրագիծ ունեցող տերևներով, որոնց մուգ կանաչ փայլուն մակերևույթը պատված է կետիկներով: Հազվադեպ հանդիպում է նաև դեղնատերև տեսակը (Hummel's Sunset): Սակայն, այս տնային բույսի ամենատարածված անվանումը՝ երջանկության ծառ է: Այս բույսը սիրվել է իր պարզ և հարմարվող բնավորության համար: Երջանկության ծառը տնկում են ծաղկամաններում և ոչ փխրուն հողում: Չի կարելի օգտագործել տորֆի խառնուրդներ: Ծաղկամանի հատակին անհրաժեշտ է շարել փոքրիկ քարեր, որը կպահպանի արմատները փտելուց:

Ֆեն-շուի ուսմունքի համաձայն՝ թանձրատերևուկը պետք է տնկել կարմիր գույն ունեցող ծաղկամանում և պահել սենյակի հարավարևելյան անկյունում: Սա դրամական թալիսմաններից մեկն է: Չինական կայսրերի պալատներում այս բույսը հատկապես գնահատել են հարստություն պարգևելու և դրամի էներգետիկան պահելու կարողության պատճառով: Իսկ եթե տասնամյա թանձրատերևուկը նաև ծաղկում է, ապա պատրաստեք ինչուն մետաղադրամների համար նախատեսված մի մեծ պարկ: Թեև, անհրաժեշտ է նշել, որ վարդագույն ծաղիկները հազվադեպ են հայտնվում: Ասում են, որ եթե թանձրատերևուկով ծաղկմանը դնեք նարնջի

ծառի և ծաղկող քրիզանթեմի թփի կողքին, ապա Ձեր ֆինանսական վիճակը կբարելավվի յուրաքանչյուր րոպեն մեկ: Համարվում է, որ այս բույսը նպաստում է լավ տրամադրությանը և ծառանման ցողունի ու կլորավուն տերևների շնորհիվ օժտված է դրական էներգետիկայով:

Ինչպես նշում է բույսերի բիոդաշտերի գերմանացի հետազոտող Եվա-Կատարինա Հոֆֆմանը, թանձրատերևուկի տերևների շուրջը՝ որպես թիթեռնիկների ուրախ խումբ, պարում են էներգիայի փոքրիկ պարուրագծիկներ՝ այս բույսը տան մթնոլորտին հաղորդում է հանգստություն, կայունություն և խաղաղություն, քանի որ պատկանում է հիմնական, այսինքն՝ հաստատուն համաստեղություն համարվող նշանին՝ Այծեղջյուրին: Թանձրատերևուկը մարդու մոտ մշակում և զարգացնում է աշխատասիրություն և համառություն, բարերար կերպով ազդում մարմնի մասերի և օրգանների, ոսկրամկանային համակարգի և մաշկի վրա:

Օգտակար հատկությունները՝

Շուրթերին դուրս եկած հերպեսի դեպքում, փողածառի տերևներից քամած մի քանի կաթիլ հյութը յուրաքանչյուր 30 րոպեն մեկ պետք է քսել ախտահարված հատվածին կամ էլ հյութով տոգորված բամբակի խծուծը կպչուն բժշկական ժապավենով ֆիքսել խնդրահարույց հատվածում: Անգինայի դեպքում՝ փողածառի 10 տերևների հյութը քամել ու խառնել 200 գ ջրի հետ և դրանով կոկորդը ողողել՝ օրական 2-5 անգամ:

Ստամոքսի և տասներկումատնյա աղիքի խոցային հիվանդությունների դեպքում, առավոտյան ուտելուց 1 ժամ առաջ պետք է 2 տերև լավ ծամելով ուտել:

Արվածքների, վնասվածքների, վերքերի, կտրվածքների ժամանակ տերևից պատրաստված շիլան դնել վնասված հատվածներին ու թանզիֆով ամրակապել, չորանալուն պես՝ 2-3 ժամից, այն փոխել: Այս օգտակար հատկություններով տարվել շատ պետք չէ: Բանն այն է, որ փողածառի տերևները մեծ քանակությամբ մկնդեղ են պարունակում, դրա համար, հատկապես ներքին ընդունման դեպքերում, այդ բույսի հիմքով պատրաստված դեղամիջոցները չի կարելի չարաշահել:

Խնամքը

Եթե ծառի տերևները հանկարծակի թափվում են, ուրեմն՝ ջրելիս ջուրը եղել է շատ սառը, կամ ծառը քիչ է ջրվել:

Ամռանը, հողի շատ խոնավ լինելու պատճառով, տերևները սկսում են թոռոմել և գունատվել: Իսկ եթե բույսը քիչ է ջրվում, տերևները կնճռոտվում են և կորցնում են իրենց փայլը:

Տգեղ երկար ցողուն կարող է ստացվել՝ լույսի պակասի կամ շատ ջրելու պատճառով: Որպեսզի երջանկության ծառը չթեքվի, հարկավոր է պարբերաբար պտտել ծաղկամանը: Այս բույսն ունի ծառի տեսք՝ ներքևի տերևներն աստիճանաբար թափվում են, առաջանում է բաց ցողուն, իսկ տերևներն աճում են վերևից:

Թարգմանությունը՝ Լիլիթ Գասպարյանի

Հետաքրքիր բույսեր

ՎԵՆԵՐԱ ՃԱՆՃԲՌՆԻՉ



Աշխարհում գոյություն ունեն նաև մսակեր բույսեր: Դրանցից է վեներայի ճանճբռնիչը: Ամենայն հավանականությամբ, այն ամենահայտնի սպանիչ բույսն է: Այն հիմնականում սպանում է միջատներին և սարդերին: Այս բույսի հրապուրանքը քաղցր նեկտարն է, որը ծուղակի մեջ է գցում իր զոհերին: Բույսն իր վրա ունի նաև բազմաթիվ մազիկներ: Եթե միջատը կպչում է թեկուզ մեկին, ապա, մի վայրկյանի ընթացքում, այն առաջացնում է մի շարք գործողություններ, որն աշխատանքի է դնում ծուղակը: Բույսը շատ արագ փակվում է, և զոհը հայտնվում է ներսում, որտեղից փախուստն անհավանական է: Հետո զոհը դանդաղորեն այրվում է:

ՑՈՂԱԽՈՏ

Այս բույսը շատ հետաքրքիր տեսք ունի: Առաջին հայացքից թվում է, թե այս բույսերի երկար տերևների վերջում կան ցողեր: Բայց ինչպես շատ բույսերի դեպքում, արտաքինը խաբուսիկ է, նրանք իսկական սպանողներ են: Առաջին հայացքից թվացող ցողերը ամենևին էլ ցողեր չեն: Դա կպչուն նյութ է, որը հայտնի է բուսական սոսինձ անունով. այն թակարդի մեջ է գցում ցանկացած միջատի, որը հրապուրվում է ծաղկի փայլուն գնդիկներով: Երբ միջատը կպչում է թվացյալ ցողին, բացահայտվում է բույսի իրական հրաշալիքը: Դրա շնորհիվ բույսն իր զոհին բերում է տերևի կենտրոնական մասը և սոսնձում:

Հարգելի քաղաքացիներ,

Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք զանգահարել ***011 23 14 30*** հեռախոսահամարով:

Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ ***«Նոյան Տապան» և «Բուկինիստ»*** գրատներում:

ԱԳՐՈ Լրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրեն Ա. ՎԱՀԱՆՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Ն. ՍԱՀԱԿՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 135
ստորագրված է տպագրության 14.12.2015 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա